

Արձանագրություն N 2

ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/49 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ԵՊՀ կարիքների համար լաբորատոր սարքերի և պարագաների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

05.03.2024թ.

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

ժ. 11:00

Խ. Ներկարարյան (Գնահատող հանձնաժողովի նախագահ),

հանձնաժողովի անդամներ՝

Վ. Թադևոսյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),

Ն. Սահակյան (Գնահատող հանձնաժողովի անդամ),

հանձնաժողովի քարտուղար՝

Մ. Ավագյան՝ (Գնահատող հանձնաժողովի քարտուղար):

Էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի շրջանակներում ստացված հարցումների վերաբերյալ

-----  
Հանձնաժողովի նախագահ՝ Խ. Ներկարարյան

Պատասխանել էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի 6, 12, 13, 21, 53, 54-րդ չափաբաժինների վերաբերյալ 03.03.2024թ. ստացված հարցումներին:

**Հարցադրում N 1**

Հարգելի գործընկեր, 53 և 54 ընթացակարգի չափաբաժիններում, թե՛ հրավերում և թե՛ տեխնիկական բնութագրում նշված են նույն պահանջները: Իսկ համակարգում լուծելիությունները համապատասխանաբար 2,91 և 5 մեգապիքսել են: Ենթադրում եմ կա վրիպակ փաստաթղթերում: Խնդրում եմ պարզաբանել:

**Պարզաբանում N 1**

Հարգելի մասնակից տեղեկացնում եմք, որ տեղի է ունեցել վրիպակ 53 և 54 չափաբաժինների համար տեխնիկական բնութագիրը կցվել է նույն բովանդակությունը, հրավերի փոփոխությունով կկցվի ճիշտ տարբերակը:

## Հարցադրում N 2

Ի լրումն նախորդ հարցման, խնդրում եմ ուշադրություն դարձնել նաև Պատկերային սենսորներին և պիքսելների չափսերին:

### Պարզաբանում N 1

Ներկայացված տեսախցիկների պատկերային սենսորների և պիքսելների չափերը նշված են այնպես, որպեսզի նկարահանվող պատկերների որակը բավարար լինի փորձում մեզ հետաքրքրող երևույթների քանակական և որակական բնութագրերը հաշվելու համար, իսկ տեսախցիկի լուծելիությունը լինի ավելին, քան փորձարարական սխեմայում օգտագործվող մոդուլյատորներինը, ինչպիսիք են Տարածական լուսային մոդուլյատորը (SLM) կամ թվային միկրոհայելային համակարգը (DMD):

## Հարցադրում N 3

Բարև ձեզ: 21 րդ չափաբաժնով պահանջվում է բարձր հաճախային պլազմային գեներատոր որը պետք է համապատասխանի լաբորատորիայում առկա գազային ֆազայից քիմիական նստաեցման եղանակով (CVD) կիսահաղորդչային բարակ թաղանթներ ստանալու սարքավորմանը: Խնդրում եմ նշել ձեր լաբորատորիայում առկա CVD սարքի մոդելը, համապատասխանությունը գնահատելու համար:

### Պարզաբանում N 1

Հաստատում եմ, որ ԵՂՀ Ֆիզիկայի ինստիտուտի Կիսահաղորդչային սարքերի և նանոտեխնոլոգիաների կենտրոնում առկա է գազային ֆազայից քիմիական նստաեցման համակարգը (YSU-CVD1):

Սարքում օգտագործվում է պլազմային ակտիվացիայով CVD պրոցեսը, ինչի համար մինչ վերջևս օգտագործվել է կենտրոնում առկա հին պլազմային գեներատորը, որը լիովին չի բավարարել անհրաժեշտ պայմաններին:

Բարձրորակ բարակ թաղանթներ ստանալու, ինչպես նաև թանկարժեք գերմաքուր գազերը ինստիտուտում օգտագործելու համար անհրաժեշտ է գնել բարձր հաճախականային գեներատոր (600 W, 13.56MHz) և չորս գազի հոսքի կարգավորիչ՝ տարբեր հոսքեր կառավարելու համար:

## Հարցադրում N 4

Խնդրում եմ նշել ի՞նչ սարքերի համար են նախատեսված 12 և 13 չափաբաժիններով պահանջվող օբյեկտիվները: Համապատասխանության գնահատման համար խնդրում եմ նշել սարքերի մոդելները և սերիական համարները:

### Պարզաբանում N 1

Օբյեկտիվները անհրաժեշտ են Leica DM18 օպտիկական միկրոսկոպի համար:

## Հարցադրում N 5

Հարգելի՛ գործընկեր, 6-րդ չափաբաժնի համար գրված է "Պոտենցուստատ – գալվոնուստատ Corrtaset CS350M մոդելի, կամ համարժեք Smart-Stat PS-50, TOB-CS-350 մոդելների": Նարկայացված են Corrtaset CS350M մոդելի պարամետրերը: Smart-Stat PS-50, TOB-CS-350 համարժեքներն ունեն տարբերություններ: Խնդրում եմ հաստատել, որ ընդունելի են ձեր նշած համարժեքներն անկախ տարբերություններին:

## Պարզաբանում N 1

Նշված մոդելները Smart-Stat PS-50, TOB-CS-350 նույնպես ընդունելի են: Խնդրում եմ ուշադրություն դարձնել նաև տեխնիկական բնութագրի ստորև բերված պահանջներին:

### Համակարգը իր մեջ պետք է ներառի՝

1. Հակադարձ պլատինե էլեկտրոդ 0,5-37 մմ լար– 2հատ
  2. Պլատինե թիթեոյա էլեկտրոդ 10\*10\*0,1մմ – 1հատ
  3. Պլատինե աշխատանքային էլեկտրոդ ներքին տրամագիծ՝ 2մմ – 1հատ
  4. Աշխատանքային բջջիչ իր ֆիքսման համակարգով, ֆիքսումը ուղղահայաց և հորիզոնական ձողերի միջոցով, նյութը PTFE, բջջի աշխատանքային ծավալը 30մլ. կափարիչի վրա էլեկտրոդների ֆիքսման անցքեր 6մմ, 6,35մմ ,2մմ – 1հատ
  5. Զոդված էլեկտրոդիմիական բջիչ 50մլ, տեֆլոնից կափարիչով – 1հատ
  6. Էլեկտրոդների փայլեցման հավաքածու, – 1 հատ
  7. Նմուշի բռնիչ տեֆլոնե ձողից 6մմ տրամագծով նվազագույնը մինչև 1մմ հաստությամբ նմուշների համար-1հատ
- Բոլոր 3 մոդելները պետք է ներառեն ներկայացված լրակազմը:


Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի  
Նախագահ

  
\_\_\_\_\_ Խ. Ներկարարյան

անդամներ՝

  
\_\_\_\_\_ Վ. Թադևոսյան

  
\_\_\_\_\_ Ն. Սահակյան

քարտուղար

  
\_\_\_\_\_ Մ. Ավագյան